ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Մայրենի դասագրքերի նկարազարդումները որպես մեթոդական կառույցի օժանդակ բաղադրիչ և ուսումնական նյութի յուրացման միջոց

ԱՌԱՐԿԱ Մայրենի

ՀԵՏԱԶՈՏՈՂ Մերի Գրիգորյան

ՄԱՐԶ Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Շամիրամի Ուսուբ բեկի (Թեմուրյանցի) անվան հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- էջ 3

Մայրենի դասագրքերի նկարազարդումները և թեմատիկ նկարները _____ էջ 4

Այբբենարանում և դասագրքերում զետեղված նկարազարդումների և թեմատիկ նկարների վերլուծություն ---------- էջ 7

Դասերի վարում և արդյունքների վերլուծություն _____ էջ 22

Եզրակացություն ---------- էջ 30

Օգտագործված գրականության ցանկ _____ էջ 31

Հարցաթերթիկ ---------- էջ 32

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրի զարգացումն սկսվել է նկարից: Խոսքը գրի առնելու ամենանախնական ձևը եղել է պատկերագրությունը: Պարկերագրերը նկարներ էին, ծանոթ առարկաների պատկերներ, որոնց միջոցով հաղորդվում էր այդ առարկաների հետ կատարված որևէ իրողություն: Պատկերագրական յուրաքանչյուր հուշարձան որևէ բարդ նկար է կամ նկարների ամբողջական շարք, ինչպես նկարներով արտահայտված պատմությունը:

«Մայրենիի դասագրքերի նկարազարդումները՝ որպես մեթոդական կառույցի օժանդակ բաղադրիչ և ուսումնական նյութի յուրացման միջոց» թեմայի շրջանակներում կուսումնասիրենք, թե որքան կարևոր դեր ունեն նկարազարդումները կրտսեր դպրոցականների մայրենի առարկայի յուրաքանչյուր դաս առավել պատկերավոր և գեղեցիկ ներկայացնելու գործում: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ տարիքի աշակերտների հիշողությունը պատկերավոր է, անհրաժեշտ է յուրաքանչյուր թեմա ուսուցանելիս լինի նաև համապատասխան նկարազարդում, որպեսզի աշակերտի համար հասկանալի լինի դասի իմաստը և տպավորվի հիշողության մեջ:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է մայրենի դասագրքերի նկարազարդումների՝ որպես մեթոդական կառույցի օժանդակ բաղադրիչի և ուսումնական նյութի յուրացման միջոցի մեթոդական անկատարությամբ և դրա ուսումնասիրության անհրաժեշտությամբ:

Ուսումնասիրության նպատակն է ներկայացնել նկարազարդումները որպես մեթոդական կառույցի օժանդակ բաղադրիչ և մշակել մեթոդական ցուցումներ՝ դրանք որպես ուսումնական նյութի յուրացման միջոց գործածելու համար:

Ուսումնասիրության ընթացքում մեր առջև դրել ենք հետևյալ **խնդիրները՝**

1. Ուսումնասիրել թեմայի վերաբերյալ համապատասխան ուսումնամեթոդական գրականություն, չափորոշիչ, դասագրեր:

2. Ուսումնասիրել և արժևորել դասագրքերում եղած նկարազարդումները:

3. Ներկայացնել մայրենի դասագրքերի նկարազարդումները, անդրադառնալ դրանց համապատասխանությանը տվյալ դասին, դրանց գունային և պատկերային, ինչպես նաև աշակերտների համար հասկանալի լինելուն:

4. Մշակել մեթոդական ցուցումներ նկարազարդումները որպես ուսումնական նյութ գործածելու նպատակով

Գործնական նշանակությունը: Մեր ուսումնասիրությունների արդյունքները կարող են կիրառվել ինչպես տարրական դպրոցում, այնպես էլ մանկավարժական պրակտիկաների ընթացքում:

Ուսումնասիրության ընթացքում կիրառված մեթոդները՝

Զրույց, ցուցադրում , երկխոսություն

ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԹԵՄԱՏԻԿ ՆԿԱՐՆԵՐԸ

Նկարազարդումները այբբենական շրջանում Այս բաժնում ուսուցվում են հայերնի հնչյուններն և տառերը (գրելը), ինչպես նաև մշակվում են կարդալու և գրելու սկզբնական կարողությունները: Հնչյունների և տառերի ուսուցմանը հաջորդում է բառերը կարդալու և գրելու ուսուցումը, իսկ հետո բառակապակցությունները, նախադասությունները:

Գրուսուցման բաժնի առաջին էջում տրվում է բանավոր խոսքի զարգացման համար թեմատիկ նկար, որի վերևում կլոր շրջանակի մեջ գրվում են տվյալ տառի մեծատառի և փոքրատառի գրաֆիկական ճշգրիտ տեսքերը: Թեմատիկ նկարը հագեցած է տվյալ հնչյունը պարունակող բառերի ցույց տված առարկաների պատկերներով: Որպեսզի երեխաները լավ հիշեն ուսուցվող տառերը, դրանք ներկայացվում են այնպիսի առարկայի, բույսի, կենդանու տեսքով, որոնք արդեն ծանոթ են երեխաներին: Նախապատրաստական շրջանում երեխան արդեն սովորել է բառերը կարդալ վանկերով, գծապատկերներով: Այժմ փոքրիկ նկարելուկների միջոցով նա շարունակում է կարդալ դրանք. յուրաքանչյուր նկարելուկի մեջ գրված է ուսուցանվող տառը: Այս էջում երեխան սովորում է կարդալ մի քանի բառ, բառակապակցություն, այնուհետև երկրորդ էջում դարձյալ կարդում է բառեր, բառակապակցություններ, ինչպես նաև տեքստեր: Իսկ երրորդ էջում տրված են հետաքրքրաշարժ բառախաղեր, առաջադրանքներ, որոնք նպաստում են ուսուցվող տառի ամրապնդմանը, նաև մարզում են հիշողությունը, տրամաբանական մտածողությունը, նպաստում են արագ կարդալու և գրելու ունակությունների զարգացմանը: Նկարները նպաստում են՝ բառապաշարի հարստացմանը, բանավոր խոսքի հղկմանը:

Նկարազարդումները լինում են

Թեմատիկ Առարկայական

Այբբենարանում և դասագրքերում զետեղված նկարազարդումների և թեմատիկ նկարների վերլուծություն

	Թեմատիկ նկարներ	Առարկայական նկարներ
Նախայբբենական շրջան	20	140
Այբբենական շրջան	53	214
Հետայբբենական շրջան	59	33

Թեմատիկ նկարներ՝ 73

Նկարների հիմնական բովանդակությունը՝



Այսպիսով, ինչպես տեսնում ենքԱյբբենարանում կան 73 թեմատիկ նկարներ, որոնցից 18-ը բնության թեմաներով է, 6-ը նվիրված է ընտանիքին, 8-ը՝ կենդանիներին, 5-ը՝ ընկերությանը, 3-ը՝ ազգային արժեքներին և 1-ը՝ ուսումնական գործունեությանը:

Առարկայական նկարներ՝ 354

Առարկայական նկարների խմբերն են



Այբբենարանում և դասագրքերում զետեղված նկարազարդումների և թեմատիկ նկարների վերլուծություն

<< Այն ինչ ես լսում եմ , նշանակություն չունի , այն ինչ տեսնում եմ , կարևոր է, հատկապես երբ փակում եմ աչքերս>>:

Ջորջիո դի Կիրիկո

Ա հնչյուն - տառի ուսուցումը

Թեմատիկ նկարում Արարատն է, արև և ամպեր։ Նաև երևում ենարևաածաղիկներ և բարդիներ։ Երևում են սարեր, ավտոբուս, կամուրջ, Խաղողի վազերի մոտ Արան է կանգնած ընկերների հետ և ցույց է տալիս Արարատը։ Թեմատիկ նկարի ներքևում Ա-ի տեսքով պատկերված են արծիվ, աղվես, աքաղաղ, իսկ ներքևում պատկերված են նկարելուկներ՝ ա (շուն), ա (նուշ), ա (ծուխ)։

Առարկայական նկարների խմբերն են՝

- ✓ Ծաղիկներ
- ✓ Կենդանիներ
- ✓ Թռչուններ
- ✓ կահույք՝
    - ➢ ննջասենյակի
    - ➢ ճաշասենյակի
    - ➢ խոհանոցի
- ✓ Բնություն
- ✓ Բժշկական պարագներ
- ✓ Տնտեսական պարագաներ

Ր հնչյուն - տառի ուսուցումը

Մեր երրորդ տառն այբբենարանում ր հնչյուն – տառն է : Մեր երրորդ տառն այբբենարանում ր հնչյուն – տառն է : Թեմատիկ նկարում պատկերված են Արագած սարը , բարդիներ , արագիլ , արտեր, կամուրջ , տներ , արտերի միջով ձգվող ճանապարհ և այլն : Էջի ներքևում նկարի տեսքով տրված են կարաս , մասուր և արագիլ , որոնք ներկայացված է գծապատկերով:



Բանավոր խոսքի զարգացման նպատակով երկրորդ էջում ևս ներկայացված է մեկ թեմատիկ նկար։ Սեղանի շուրջ նստած են հայրիկը , մայրիկը , քույրիկը , Արան , պապիկը և տատիկը ։ Պատուհանից երևում են սարեր , արևածաղիկ, կարմիր կտուրներով տներ , երևում են նաև վարագույրներ ։ Սեղանին դրված ենափսեներ,դանակներ ,պատառաքաղներ և մրգեր ։ Էջի ներքևում նկարված են հարս , սուր , խոհարար , որոնք նույնպես ներկայացված է գծապատկրի տեսքով ։ Իսկ հաջորդ էջի վերևում նկարված են մեր սարերը ՝ Արայի լեռ , Արագած և Արարատ ։ Վերջում արդեն պատկերված է խաղի տեսքով մի նկար , որտեղ երեխաները պետք է գտնեն ավելորդը ։ Օրինակ՝ պատկերված են թռչուններ և ձուկ ։ Պետք է առանձնացնել են ձուկը։

Առարկայական նկարների խմբերն են ՝

- ✓ Բնություն
- ✓ Կենդանիներ
- ✓ Բանջարեղեն
- ✓ Թռչուններ

Կ հնչյուն - տառի ուսուցումը



Այբբենարանի 53-րդ էջում սկսվում է կ հնչյուն - տառի ուսուցումը : Մեր թեմատիկ նկարում անձրև է, երկնքում կուտակվել են ամպեր , կայծակն է փայլատակում : Կատուն կանգնած է ճանապարհին և սպասում է , փոքրիկ ծիտիկը անձրևից պաշտպանվելու նպատակով պատսպարվել է սունկի տակ : Ճանապարհի վրա փոքրիկ լճակներ են գոյացել : Հեռվից երևում է մի ավտոմեքենա , որի վարորդը՝ մուկն է :
Թեմատիկ նկարի ներքևում Կ տառը պատկերված է կացնի , կատվի և կայծակի տեսքով : Տառապատկերի ներքևում պատկերված են նկարելուկներ՝ կ(լոր), ձու(կ) : Նախորդ տառն արդեն ուսուցանելիս մենք արդեն տեսել էինք կարապի և կարասի նկարներն իրենց գծապատկերներով , բնականաբար անցած տառի ուսուցման ժամանակ գծապատկերներում բաց էր թողնված կ տառը , քանի որ երեխաները դեռ չէին անցել կ հնչյուն – տառը :
Հաջորդ էջում նույնպես տրված են երկու թեմատիկ նկարներ , որոնց ներքևում գրված է մեկ նախադասություն : Առաջին նկարում Անուշը գիրք է կարդում , տատիկը կար է անում , իսկ Անին տիկնիկը ցույց է տալիս Անուշին և խնդրում, որ շոր կարի իր տիկնիկի համար : Երկրորդ նկարում Արան է, հայրիկը , մայրիկը և քույրիկը : Նրանք վրան են խփել և պատրաստվում են ընթրելու : Ճաշով լի կաթսան կախված է խարույկի ցախի վրա , որը պետք է վառեն : Քույրիկը անհամբեր է և Արային ասում է , որ կրակ անի :



Հաջորդ էջում տրված է նկարների տեսքով մի խաղ, որը վերաբերում է կ – ի ուսուցմանը ։ Նկարների մեջտեղում ակ տառակապակցությունն է , ձախ կողմում նկարված են դրոշ, զանգ , կոճ և նավ , այնուհետև դրանք միանալով ակ – ի հետ դառնում են ՝ դրոշակ , զանգակ , կոճակ և նավակ ։ Իսկ վերջում խաղի տեսքով պատկերված է մի նկար ՝ որն է ավելորդը ։ Նկարում պատկերված են կանաչ , սալոր, մասուր , զանգակ և մի թռչուն ՝ լոր ։ Թռչունն ավելորդ է ։

Առարկայական նկարների խմբերն են ՝

- ✓ Բնություն
- ✓ Կենդանիներ
- ✓ Բանջարեղեն
- ✓ Թռչուններ
- ✓ Ընտանիք
- ✓ Գրենական պիտույքներ
- ✓ Ծաղիկներ

Ն հնչյուն - տառի ուսուցումը



Թեմատիկ նկարում ծովն է , նավապետ , նավաստի , նկարիչ , ներկեր : Նկարիչն նկարում է, նավապետն և նավաստին զրուցում են , նավապետը հեռադիտակով նայում է հեռուն : Ջրում ձկներ են լողում: Էջի ներքևում հետաքրքիր նկարներ են երևում. Արագիը կտուցով բռնած բերում է ուսուցվող կ տառը և դնում է կար բառի սկզբում և ստանում ենք նկար բառը : Հաջորդ նկարում պատկերված է վարդ, իսկ ն տառը սկզբում է , եթե միացնենք մեր ուսուցանվող տառն , ապա կստանանք Նվարդ բառը : Հաջորդ նկարում երևում է սար, որի մեջտեղում իջեցվում է ն տառը և ստանում ենք սանր բառը։Վերջին էջում ևս ներկայացված է մի թեմատիկ նկար : Երեխաներն արջի և ռոբոտի հետ պահմտոցի են խաղում : Յուրաքանչյուրի վրա կա մի տառ : Երեխաները պետք է գտնեն աչքերը փակածի անունը : Եթե տառերը հաջորդաբար միացնեն , ապա կստանան աշակերտի անունը՝ Սիրան :

Առարկայական նկարների խմբերն են՝

- ✓ Բնություն
- ✓ Կենդանիներ
- ✓ Թռչուններ
- ✓ Ընտանիք
- ✓ Գրենական պիտույքներ
- ✓ Ծաղիկներ

Է հնչյուն - տառի ուսուցումը



Մեր թեմատիկ նկարում Էրեբունի ամրոցն է ։ Էրեբունին մեր այսօրվա Երևանի հին անվանումն է ։ Էրեբունի- Երևանը շատ հին ժամանակներում հիմնել է Արգիշտի հայ թագավորը։ Այն ժամանակ էլեկտրականություն չկար։ Լուսավորելու համար ճրագներ ու ջահեր էին վառում ։ Ավտոմեքենաներ չկային։ Կային կառքեր , որոնք քաշում էին եզներն ու էշերը ։ Քաղաքում հայեր էին ապրում ։

Հաջորդ էջում ևս ունենք մեկ թեմատիկ նկար՝ «Լիալուսին»վերնագրով ։ Այս թեմատիկ նկարում՝ Էմինի մայրիկը ասում է տղային՝ նայի՛ր, լուսինը մտնում է ամպի տակ ։ Էմինը հարցնում է՝ մայրի՛կ, լուսինը լույս է տալիս։ Իսկ մայրիկը պատասխանում է, որ լուսինը արևի լույսն է։ Վերջին էջում տրված է խաչբառ , որը պետք է լրացնել՝ նկարներից օգտվելով։



Առարկայական նկարների խմբերն են՝

- ✓ Բնություն
- ✓ Կենդանիներ
- ✓ Էլեկտրոնիկա

Զ հնչյուն - տառի ուսուցումը



Մեր թեմատիկ նկարում Երևանի Հանրապետության հրապարակն է ։ Հաղթանակի օրն է ։ Հրապարակում զինվորական շքերթ է ։Երևում են զրահամեքենաները , հզոր հրթիռները ։ Հայ զինվորները զինված են ժամանակակից զենքերով ։ Նրանք լավ մարզված են ։ Մեր բանակի ռազմիկները հպարտորեն են քայլում հրապարակով , չէ՞որ նրանք են պաշպանում հայրենիքը ։

Առարկայական նկարների խմբերն են՝

- ✓ Կենդանիներ
- ✓ Ծաղիկներ

Բնություն

Ուսումնասիրության նյութ է դարձել «Մայրենիի» 3րդ դասարանի դասագրքի մեջ ընդգրկված Լիպարիտ Սարգսյանի «Քո տունը» բանաստեղծությունը» և տվյալ էջում տեղ գտած նկարազարդու

Լիպարիտ Սարգսյան

ՔՈ ՏՈՒՆԸ

Ճուտը ասաց ճնճղուկ մորը.
- Ձյուն է գալու, ցրտեց օրը:
Ուրիշների նման ինչու՞
Տաք աշխարհ չենք մենք էլ թռչում:
- Ինչպե՞ս ասեմ,- տխրեց մայրը,-
Լայն ու մեծ է այս աշխարհը,
Բայց սովոր է միշտ մեր ցեղը
Ապրել միայն ծնված տեղը:
Տանել ձմռան բուքն ու ձյունը,
Բայց չլքել իր հին բույնը:
Դու փոքր ես դեռ, կմեծանաս,
Ասածներս կհասկանաս:
Երբ քո տանն ես ցուրտը տանում,
Տունն ավելի է քաղցրանում:

ԱՍԱՑՎԱԾՔ

Տնից որ գնաս, տանդ գինը նոր կիմանաս:

13

Հեղինակի բանաստեղծությունը պատմում է սեփական տան մեջ ցրտինդիմանալուն դրա նշանակության մասին:Հեղինակը նշում է, որ ուրիշ թռչուններ գնում են տաք երկրներ, սակայն ճնճղուկը չի կարող գնալ և բացատրում է իր ճուտիկին, որ իրենց ցեղը սովոր է տանել ձմռան ցուրտն ու բուքը: Առավել պատկերավոր և զգացմունքային դարձնելու համար ստեղծագործության կողքին պատկերված են ճնճղուկ մայրը և նրա ձագուկը,իսկ հեռու հեռվում տներ են: Ճնճղուկները դեղնակարմիր ծառի մի ճյուղի վրա են և ունեն խղճահարություն առաջացնող հայացք: Ճուտն ունի հարցական հայացք, իսկ ճնճղուկը բացատրում է ճուտիկին՝ ինչու է այդպես:

Նկարազարդումն օգնում է աշակերտներին առավել պատկերավոր ներկայացնել հեղինակի նկարագրած ցուրտը,բուքը, թռչունների հուսահատական և խղճահարություն արտահայտող վիճակը և խոր աշնան շունչը:

Գուրգեն Գաբրիելյանի «Նուռ»բանաստեղծությունը:Այս ստեղծագործության մեջ ներկայացվում է Հայաստանի խորհրդանիշերից մեկ՝նուռմիրգը,որը մի շարք պատկերաքանդակների և ստեղծագործությունների ստեղծման ազդակ է:Ստեղծագործության մեջ աշակերտներին ներկայացվում է նռան և տարվա օրերի նմանությունը, քանի որ նուռն ունի 365 հատիկ և ավելի:

Պատկերված էերկու նուռ,որոնցից մեկը ճաքած է և երեւում են նռան ալ կարմիր հատիկները,իսկ մյուսը՝ամբողջական էև շքեղ: Մյուս նկարազարդումը քանդակ է, որը փաստում է մրգի ազգային խորհրդանիշ լինելու մասին և ստեղծագործությունը դարձնում պատկերավոր և տեսանելի:

Գուրգեն Գաբրիելյան

ՆՈՒՌ

Ի՞նչ անենք, թե ուշ եմ ծաղկում
Ծաղիկներով լցված այգում,
Ես դարձել եմ քանդակ ու գիր
Ու տարածվել երկրեերկիր։
Արևահամ, արևաբույր,
Ճաքած նռան քաղցր ծիծաղ,
Ինձ պես միթե շատերը կան,
Ես եմ միրգը մեր հայկական։
Իսկ դու գիտես՝ տարին ծոցում
Քանի օր է հասունացնում.
Մեկը մյուսից սիրուն ու նոր
Երեք հարյուր վաթսունհինգ օր։
Այսքան հատիկ կարմիր գույնի
Միայն հասած նուռը ունի։
Եթե սիրտս բացես լրիվ,
Ես կլինեմ ցաքուցրիվ։
Հետո կասես. «Վա՜յ, կարմի՛ր նուռ,
Այսքան հատիկ ո՞նց էր մի բուռ»։

ծաղկել
երկրեերկիր
միրգ

Հայրապետ Հայրապետյանի «Ես աշունն եմ սիրում» ստեղծագործության մեջ ներկայացվում է հրաշագեղ աշունը:

Հայրապետ Հայրապետյան

ԵՍ ԱՇՈՒՆՆ ԵՄ ՍԻՐՈՒՄ

Ես աշունն եմ սիրում
Դեղնահեր ու սիրուն,
Երբ տերևն անտառում
Քամու հետ է պարում,
Երբ ծառերը այգում,
Բեռներից ազատված,
Հողմահար օրորվում,
Սվսվում են կամաց:

Ես աշունն եմ սիրում
Բերքառատ ու նախշուն,
Երբ գյուղի դաշտերում
Առատ բերք են դիզում,
Երբ առուն հորդացած
Գլգլում է, հոսում
Եվ ճամփին հնարած
Նոր երգերն է ասում...

Ստեղծագործությունը ուղեկցվում է նկարազարդումով,որը ստեղծում է աշնան գեղեցիկ տեսարան եվ ավելի պատկերավոր է ներկայացնում աշնան բնապատկերը:Պատկերված է աշուն տատիկը՝ մրգերով լի զամբյուղով,որի մեջ կան տանձ,խնձոր,խաղող, նուռ և այլն:Ներքևում փոքրիկ երեխա է պատկերված,իսկ երեխայի մոտ դդում,որի մեջ մկնիկ կա: Նկարն ընթերցողին տեղափոխում էտարվա այդ եղանակ և ականատես դարձնում բնության զարթոնքին:

Նանսեն Միքայելյանի «Եղևնին» ստեղծագործության մեջ ներկայացվում է եղևնին, նրա պերճաշուք տեսքը և զարդարանքը:Ստեղծագործությունը պատկերավոր և աշակերտներին հասկանալի դարձնելու համար պատկերված է եղևնին իր ամբողջ հմայքով և գունազարդությամբ:



ՀովհաննեսԹումանյանի «ՍասունցիԴավիթ» ստեղծագործության մեջներկայացված են հայազգայինէպոսիգլխավորհերոսիխխրագործարարքընպայքարրըստարթշնամուդեմ:

Հովհաննես Թումանյան

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ

Մոնչալով ելավ տեղից
Էն առյուծի առյուծ որդին,
Իր ձին հեծավ ու փոթորկեց,
Խաղաց, շողաց Թուր Կեծակին:

Անցավ քառասուն գոմշի կաշին,
Անցավ քառասուն քարերը ցած,
Միջից կտրեց ժանտ հրեշին,
Օխտը գազ էլ դենը գնաց:

- Կենդանի եմ, մին էլ արի,
Գոռաց Մելիք հորի տակից:
Դավիթ լսեց, շատ զարմացավ
Իրեն զարկից, Թուր Կեծակից...

- Մելի՛ք,- ասավ,- թափ տուր մի քեզ:
Ու թափ տվավ Մելիքն իրեն,
Միջից եղավ ճիշտ երկու կես,
Մեկն ընկավ դեսն ու մյուսը դեն:

Էս որ տեսավ Մսրա բանակ,
Ջուր կտրվեց ահ ու վախից:
Դավիթ կանչեց.– Մի՛ վախենաք,
Ականջ արեք հալա դեռ ինձ:

Դուք ռանչպար մարդիկ,- ասավ,-
Զուրկ ու խավար, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կրակ ու ցավ,
Հազար ու մի հոգսեր ունեք:

Ի՞նչ եք առել նետ ու աղեղ,
Եկել թափել օտար դաշտեր.

առյուծ կենդանի քաղցած

Չէ՞ որ մենք էլ ունենք տուն-տեղ,
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր ...

Դարձե՛ք եկած ճանապարհով,
Ձեր հայրենի հողը Մսրա.
Բայց թե մին էլ գենք ու զոռով
Վեր եք կացել դուք մեզ վրա,

Հորում լինեն քառասուն գազ խոր,
Թե ջաղացի քարի տակին,
Կելնեն ձեր դեմ, ինչպես էսօր,
Սասմա Դավիթ, Թուր Կեծակին:

Էն ժամանակ աստված գիտի,
Ով մեզանից կըլնի փոշման.
Մենք, որ կելնենք ահեղ մարտի,
Թե՞ դուք, որ մեզ արիք դուշման...

ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

Լավ է մեռնել կանգնած, քան ապրել ծնկաչոք:

Քաջը մեկ անգամ է մեռնում, վախկոտը՝ հազար:

Սասունցի Դավիթն այստեղ հանդես է գալիս իբրև քաջ հսկա և կռվում է Մսրա Մելիքի դեմ: Դասանյութին կից նկարներում պատկերված են Մսրա զորքը, որը եկել է Դավթի հետ կռիվ անելու, և քաջ հերոս Սասունցի Դավիթը՝ Քուռկիկ Ջալալին հեծած և Թուր Կեծակին ձեռքին: Այս նկարազարդումն օգնում է աշակերտներին հասկանալու, որ Սասունցի Դավիթն իսկական հերոս է, ով միայնակ դուրս է եկել թշնամու ահարկու բանակի դեմ: Նրա կերպարն ունի դաստիարակչական և հայրենասիրական մեծ նշանակություն: Աշակերտները, կարդալով նյութը և դիտելով նկարները, իրենց մտքում պատկերում են հերոս Դավթին և փորձում ընդօրինակել նրան:

Դասերի վարում և արդյունքների վերլուծություն

«Մայրենի 3» դասագրքի մեթոդական կառույցի օժանդակ բաղադրիչների կարևորությունն ու անհրաժեշտությունը, նաև դրանց՝ որպես սովորողների հետաքրքրության բավարարման միջոց լինելը մենք փորձել ենք հաստատել՝ ներկայացելով մեր դասավանդած դասերից մեկի նմուշօրինակ:

Դասարան՝ 3-րդ

Առարկան՝ Մայրենի

Դասագիրքը՝ «Մայրենի 3», հեղինակներ՝ (Վ. Սարգսյան և այլք):

Թեմատիկ խումբ՝ «Ժողովուրդ իմաստուն է»

Դասի թեման՝ Խնկո Ապեր , «Խոզն ու ագռավը»: Գոյական, գոյականի թիվը:

Դասի տեսակը՝ համակցված դաս
Դասը վարել ենք ԽԻԿ համակարգով:

Ուսումնասիրվող ստեղծագործության գաղափարը՝ «Քթից այն կողմ չտեսնել» դարձվածք:

Դասի ընթացքում կիրառվող մեթոդները և իրականացման եղանակները՝
կենտրոնական հարցեր, զրույց, խմբային աշխատանք, Վենի դիագրամ, աքրոստիքոս:

Անհրաժեշտ նյութեր՝
.Դասագրքեր:

.Տետրեր:

. Ինքնաշեն ցուցապաստառներ:

.Նկարներ:

. Ծառ:

. Կաղին:

.Կենդանիների խաղալիքներ:

. Տեխնիկական միջոցներ:

Դասի խնդիրները՝

Հասկանալով արտահայտիչ ընթերցեն առակը

Ստեղծագործաբար վերարտադրեն առակի բովանդակությունը

Դատողություններ անեն առակի բովանդակության շուրջ

Դուրս հանեն առակից դրական և բացասական կողմերը

Գոյականի հոգնակի թվի ճիշտ կազմության և գործածության կարողության ձևավորում:

Նպատակները

Զարգացնել բանավոր և գրավոր խոսքը

Նպաստել հասկանալով և արտահայտիչ կարդալու կարողությունների ձևավորմանը

Արժեքային համակարգի ընդլայնում. երախտագիտության զգացումի դաս-տիարակում,

երախտամոռության, կարճամտության քննադատում:

Բառապաշարի հարստացում

Գոյականի մասին ունեցած գիտելիքների վերլուծություն և ամրապնդում,

Դասի ավարտին աշակերտները պետք է .

Ա. Իմանան՝
● Գոյականի թիվը: Տեսակները:

Բ. Կարողանան՝

● Հանձնարարված ստեղծագործությունը դերերով արտահայտիչ կարդալ: ● Որոշել ուսումնասիրվող ստեղծագործության գաղափարը, կերպարների գործողությունների տրամաբանական հաջորդականությունը:
●Ճիշտ գրել ուղղագրական արժեք ներկայացնող՝ կենդանի, զարթնել, ապերախտ, փռվել, վերև, արև, օգուտ, պառկել բառերը:
●Վերարտադրել բնագիրը որպես մասնակից:
●Տարբերակել եզակի և հոգնակի գոյականները:
●Վանկատել գաղտնավանկ ունեցող բառերը և նշել գաղտնավանկը:

Գ. Տիրապետեն՝

● կենդանի, զարթնել, ապերախտ, փռվել, վերև, արև, օգուտ, պառկել ուղղագրական արժեք ներկայացնող բառերի ուղղագրությանը: ● Հասկանալով կարդալու կարողությանը:

Դասի ընթացքը՝

Խթանման փուլ

I. Կազմակերպական մաս:

II. Տնային առաջադրանքի ստուգում.

●կատարողական

● բովանդակային

III. «Մտագրոհի» միջոցով փորձեցինք ստանալ կենտրոնացնող հարցերի պատասխանները: Գրատախտակին փակցրինք առակ բառը պարունակող մի շրջան և դրա շուրջ «հավաքեցինք» աշակերտների արտահայտած մտքերը:

Ի՞նչ է առակը:

Ի՞նչ մասերից է կազմված առակը:

Ինչպե՞ս է ստեղծվել առակը:

Հայ առակագիրներից ո՞ւմ եք ծանոթ:

Իմաստավորման փուլ

Աշխատանք դասագրքով:

Հանձնարարված նյութի հարցում և ամրապնդում:

Զրույց խրատական տողերի շուրջ:

Ընտրովի ընթերցանություն:

Ընտրովի ընթերցանության մոտավոր հարցերը
1. Ընթերցե՛ք այն հատվածը, որում խոզը տալիս է անհարմար պատասխան: 34
2. Ընտրե՛ք և կարդացե՛ք այն հատվածը, որը ձեզ դուր եկավ:
3. Ո՞ր նախադասությունն ընթերցելիս դուք զարմացաք: Կարդացե՛ք այդ:

Բառային աշխատանք
1. Նորածանոթ բառերի՝ զխկտվել, անհագ, վերհիշում և ակտիվացում:

2. Ուղղագրական բառերի գործածում բառակապակցությունների և նախադասու-թյունների մեջ:

Խմբային աշխատանք

Դասարանը բաժանվում է խմբերի:

I խումբ – Առակասեր (հարց 3,6)
II խումբ – Հարցասեր (հարց 2,5)
III խումբ- Իմաստասեր

Խմբերի ավագները հարցեր են առաջարկում մյուս թիմին և սպասում պատասխանի: Պատասխանելիս լրացնում են նաև Վենի դիագրամըխումբ



Անդրադարձ օժանդակ բաղադրիչին ՝ «Դարձվածքը ափի մեջ»:

Քթից այն կողմ չտեսնել.

Ընթերցել հատվածը


5. Ի՞նչ սովորեցիր այս առակից:
6. Ինչպիսի՞ մարդկանց է խորհրդանշում խոզը: Նկարագրի՛ր:

ՔԹԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ ՉՏԵՍՆԵԼ

ԴԱՐՁՎԱԾՔԸ ԱՓԻ ՄԵՋ

Այս դարձվածքն ասում են այն մարդու մասին, որն անհեռատես է, կարճամիտ, չի մտածում իր արարքի հետևանքների մասին: Միայն մտածում է, որ այդ պահին իր համար լավ լինի, իսկ թե հետո ինչ կլինի, նրան չի հետաքրքրում:

Այդպիսի մի հերոս է մեր առակի խոզը, որն իրոք քթից այն կողմ չի տեսնում: Նա չի հասկանում, որ եթե ծառի արմատները փչանան, ծառը կչորանա, և կաղին չի լինի, որ ինքն ուտի:

1 Շարունակեք

Ինչպես տեսար, ձախ սյունա-

- Զրույց

1. Արդյո՞ք դուք գործածում եք «քթից այն կողմ չտեսնել» դարձվածը:
2. Ինչպե՞ս կնկարագրեք քթից այն կողմ չտեսնող մարդկանց:
3. Ձեր շրջապատում կա՞ն նման մարդիկ:Ի՞նչ կասեիք նրանց:

Քերականական նյութ. Գոյականի թիվը :

1. Ի՞նչ գիտեք գոյականի մասին:
2. Ի՞նչ հարցերի է պատասխանում գոյականը:
3. Եզակի և հոգնակի գոյականներ:



Աշակերտներըտալիս են հարցերի պատասխանները և բերումենեզակիևհոգնակիթվովգոյականներիօրինակներ:Վերհիշում են՝ միավանկ բառերին ավելանում է -եր,իսկ բազմավանկ բառերին՝ -ներ վերջավորությունները:

Գրավոր աշխատանք:

Շարունակի՛ր

դաշտ-դաշտեր

կաղին-

ծառ-

դուռ-

լեռ-

թռչուն-

Խմբայինաշխատանք

Iխումբ – Գրել 5 միավանկբառնդարձնելիոգնակի:

IIխումբ- Գրել 5 բազմավանկբառնդարձնելիոգնակի:

IIIխումբ- Բնագրիցգտնել 5 գոյականնդարձնելիոգնակի:

Կատարվումէառաջադրանքիստուգումնգնահատում:

Կշռադատման փուլ

●Քննարկել«Քթից այն կողմ չտեսնել» դարձվածքը:

ա) Բնագրի բովանդակության ամփոփում:

●Դասագրքի 74-րդ էջի նկարի դիտարկում:

- Առակի խոզին ճյուղ կտրող տղայի հետ համեմատում:
- 

բ) Լեզվական նյութի ամփոփում:

●Աշխատանք զույգերով: Յուրաքանչյուր զույգ ստանում է 2 ծրար, որոնցից մեկի մեջ լցված են արմատներ, իսկ մյուսի մեջ՝ -եր կամ –ներ վերջավորություններ (յուրաքանչյուրից չորսական):

Հանձնարարություն.

Ծրարների մեջ եղած արմատները և վերջավորությունները միացնել և կազմել հոգնակի գոյականներ:

● Վարժության արդյունքի քննարկում:

Տրված վերջավորությունները ավելացան բառերին, և կազմեցին հոգնակի գոյականներ:

●Լեզվական նյութի ամփոփում աշակերտների միջոցով, սահմանման ձևակերպում՝ հիմք ընդունելով զույգերով աշխատանքի արդյունքում ձեռք բերած գիտելիքները և դասագրքի 75-րդ էջի 1-ին կետը:

Տնային հանձնարարություն

Առակը սովորել անգիր, «Քթից այն կողմ չտեսնել» դարձվածքը արտագրել հրաշք տետրում:

Կատարել քերականական առաջադրանք 2, 3 էջ 75:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.
1. Նկարազարդումները կարևոր բաղադրիչ են ուսումնական գործընթացի ճիշտ կազմակերպման համար: Դրանք նպաստում են տվյալ դասանյութի պատկերավոր ընկալմանը և աշակերտների հիշողության ամրապնդմանը:
2. Մեր ուսումնասիրության արդյունքում պարզեցինք, որ թեև մայրենի դասագրքերի նկարազարդումները ունեն դիդակտիկական լուրջ արժեք, սակայն մայրենի դասերի ընթացքում բավարար աշխատանք չի իրականացվում նրանց շուրջ:
3. Կարծում ենք, շահեկան կլիներ, եթե դասագրքերի նկարազարդումները վերաբերեին աշակերտների կյանքին, ընտանեկան և ընկերական հարաբերություններին, մանկական աշխարհին:
Կարելի մշակել և ուսուցչին տրամադրել նկարազարդումները՝ որպես ուսումնական նյութի յուրացման միջոց կիրառելու մեթոդական ցուցումներ, որոնք կօգնեն և կուղորդեն ինչպես բազմափորձ, այնպես էլ սկսնակ դասվարներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա.Ե.Տեր – Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Ե., 1980, էջ 564։

2. Գյուլամիրյան Ջ., Մայրենի ուսուցման մեթոդիկա, Ե., 2018, էջ 340։

3. Գյուրջինյան Դ., Հեքեյան Ն. <<մայրենի 3>>- Ե., Էդիթ Պրինտ, 2011, էջ 83 (մաս 1)։

4. Գյուրջինյան Դ.,Հեքեյան Ն. <<մայրենի 3>>, Ե., Էդիթ Պրինտ, 2011, էջ 155 (մաս 2)։

5. Սարգսյան.,Վ <<Այբբենարան >> մեթոդական ձեռնարկ, Ե., 2006, էջ 195։

6. Սարգսյան Վ., <<Այբբենարան>> - Ե.,«Մանմար»,2017, էջ 155։

7. Սարգսյան Վ., Մայրենի 1 դասագիրք, Ե., «Մանմար», 2019, էջ 64։

8. ՍարգսյանՎ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ.,<<Մայրենի 2>>, Ե.: «Մանմար», 2020, էջ 88 (մաս 1)։

9. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ.,<<Մայրենի 2>> , Ե.,«Մանմար», 2020, էջ 80 (մաս 2)։

10. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե.,<<Մայրենի 3>> , Ե.,«Մանմար»,2020, էջ 88 (մաս 1)։

11. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե.<<Մայրենի 3>>, Ե., «Մանմար», 2020, էջ 80 (մաս 2)։

12. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Չիբուխչյան Կ., <<Մայրենի 4>>, Ե.,«Մանմար», 2019, էջ 88 (մաս 1)։

13. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Չիբուխչյան Կ.,<<Մայրենի 4>>, Ե., «Մանմար», 2019, էջ 96 (մաս 2)։

42

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հավելված 1

Հարգելի՛ աշակերտ , ակնկալում ենք անկեղծ պատասխաններ ։
Դասարան
1. Դասագրքերի նկարազարդումները քեզ դո՞ւր են գալիս ։

1) Այո

2) Ոչ

Հիմնավորում
2. Ինչպիսի՞ նկարազարդումներ ես սիրում:

3. Ի՞նչ ես կարծում՝ նկարազարդումները պետք է լինեն դասի սկզբո՞ւմ, թե՞ վերջում: Ինչո՞ւ:

1) սկզբում

2) վերջում

3) այլ տարբերակ

Հիմնավորում